№ 52 ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՑԻՍԻ 10 **1894** ԵՐԵՔՇԱԲԹԻ ՄԱՑԻՍԻ 10 № 52

ՔՍԱՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շողոքորթութիւնը մամուլի մէջ. Հաշուետուութեան կարևորութիւնը.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Սովետների օգտին. Փաստական նկարագիր. Ատրախանի և Բեսարաբիայի թեմերի դպրոցները. Նամակ Մոսկվայից. Նամակ Ատրախանից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բերլինի լրագիրների խմբագիրների դատը. Մահվան պատժի հարցը. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Քննական հայեացք.

ՇՈՂՈՔՈՐԹՈՒԹԻՒՆԸ ՄԱՄՈՒԼԻ ՄԷՋ

Մի զզուելի պատկեր է ներկայացնում այսօր հայոց մամուլը,—մի կողմից անսահման, ստրկական ստորութեան հասցրած շողոքորթութիւն, իսկ միւս կողմից սանձարձակ, փողոցային անպատկառութեան հասցրած հայհոյանք:

Շողոքորթութիւն այն մարդկանց հասցէին, որոնցից վախենում են, որոնցից շահ ունեն, սպասելիք ունեն. իսկ հայհոյանք այն մարդկանց հասցէին, որոնք համակիր չեն իրանց ստրկական, գծուծ, անվայել գործերին, իրանց ողորմելի ձգտումներին:

Ստրուկ արևելքի այդ հնադարեան ախտը՝ շողոքորթութիւնը, որ կազմում էր մեր նախահայրերի ամենասև յատկութիւնը, որդից որդի անցնելով մինչև մեր օրերը, այսօր մուտք է գործել և հայոց լրագրութեան մէջ, ապականելով ազգային խօսքը, աշխատելով քայքայել առողջ հասարակական կարծիքը, քողարկել ճշմարտութիւնը, արդարութիւնը:

Ով ունի փոքր ի շատէ քննական հայեացք, ով դէթ մի փոքր յարգում է տպագրական խօսքը, նա չէ կարող առանց զզուանքի ձեռք առնել այդ թերթերը, որոնք առաջին երեսից սկսած մինչև վերջին երեսը լի են՝ կամ ամենաստոր շողոքորթութեամբ, կամ ամենագծուծ հայհոյանքներով, որոնք ամիսներից ի վեր զբաղված են մէկին կամ միւսին շողոքորթելով, մէկին կամ միւսին հայհոյելով:

Տեսէք թէ ինչպէս այն մարդիկ, որոնք դեռ երէկ դարան մտած, որոգայթներ էին լարում այս և այն անձի դէմ, որոնք դեռ երէկ մաղի չափ անգամ արժանաւորութիւն, խելք, շնորք չէին գտնում այս և այն անձի մէջ, այսօր երկիւղ կրելով նրանց ստացած դիրքից, միանգամայն փոխվել են, և մոռանալով իրանց երէկվայ ասածը և արածը, սկսել են ստրկին վայել ստորութեամբ շողոքորթել զօրեղներին, ըսկսել են գովաբանել ոչ թէ միայն այն, ինչ արժանի է գովասանքի՝ այլ և այն, ինչ որ միայն բողոք, յարձակում և դիմադրութիւն պէտք է առաջ բերի:

Այդ բաւական չէ. մինչև պարանոցը շողոքորթութեան մէջ խրված ողորմելի թերթերը, յուսալով՝ որ քծնելով, շողոքորթելով կարող են միանգամայն խելքից հանել ում ուզում են, ոչ թէ միայն նրանց ամենասանելի քայլը, ամեն մի սովորական շարժումը, ամեն մի խօսքը արձանագրում են իբրև պատմական անմահ դէպքեր, այլ և այդ մարդկանց աւելի դուր գալու համար՝ սկսել են անտեղի, անարդար, անհիմն կերպով հայհոյել ամեն մէկին, ով համակարծիք չէ այդ անձանց այս կամ այն արարքին, ով ուզում է քննական աչքով նայել հասարակական գործիչի վրա, ով քաջութիւն ունի հրապարակով ասել, թէ ժողովուրդը սպասում է գործ, հասարակական խնդիրների լուծումն, իր վշտերին դարման...

Եւ ահա հիմնվելով լոկ անձնաւորութիւնների վրա, նպատակ ունենալով անպատճառ, ինչ գնով և ինչ միջոցով էլ լինի՝ հասնել իրանց զազիր նպատակներին, և չը զրկվել զօրեղ հովանաւորներից, հայոց մամուլի ամենալի օրգանները մի քանի ամսից ի վեր այլ և այլ ուրիշ նիւթ, ուրիշ խնդիր, ուրիշ պարապմունք չունեն, բայց եթէ շողոքորթել մէկին և հայհոյել միւսին, խունկ ծխել մէկի առաջ և ամենաստոր դրպարտութիւններ թափել միւսի վրա, գովաբանել մի քանիների դատարկ և անմիտ գործերը, և արշաւանք սկսել միւսների օգտաւէտ, խելացի ձեռնարկութիւնների և մտքերի դէմ:

Այդ է պատճառը, որ հայոց մամուլի այդ ողորմելի օրգանները այժմ բացառապէս զբաղված են մի խումբ անձնաւորութիւններով միայն, լցնելով իրանց էջերը անսահման շողոքորթութեամբ: Եւ դրանով էլ չը բաւականանալով, լրագրական էջերից դուրս էլ դիմում են այնպիսի ստոր, զզուելի, նենգ միջոցների, որ միջնադարեան եզուիտների փեշակն էր կազմում...

Եւ հայոց մամուլը իր անվայել, տպագրական խօսքին անարժան ընթացքի մէջ երբէք այնքան առաջ չէր գնացել, որքան այժմ, երբէք այնքան երես չէր առել, որքան այժմ:

Եւ հասկանալի է, թէ ինչու.—որովհետև շողոքորթութիւնը, հայհոյանքը, եւրոպական պրպտիչները իրանց համար զէնք շինած մարդիկ յոյս ունեն և երազում են, թէ իրանց շողոքորթութիւններով, իրանց կոկորդիլոսեան արտասուքներով կարող են խաբել ում ուզում են, կարող են շոյել սրա կամ նրա ինքնասիրութիւնը, և այդպիսով իրանց ձեռքին զէնք դարձնել...

Թող շարունակեն: Այդ բոլորի դատաստանը կը տեսնի ինքը հասարակաց կարծիքը, որի վրա չէ կարող ազդել ոչ ստրկական շողոքորթութիւնը և ոչ էլ որ և է հայհոյանք:

ՀԱՇՈՒԵՏՒՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Շատ ծանր տպաւորութիւն է թողնում, երբ լուրեր են հասնում, թէ այս ինչ կամ այն ինչ նպատակով հանգանակված գումարը տեղ չէ հացրած կամ կանոնաւոր չէ ծախսված: Հասարակութիւնը սկսում է կորցնել հաւատը դէպի նուիրաբերութեան գործը, նա այլ և ևս չէ վստահանում նոր նուիրատուութիւններ անել, չը յուսալով հաստատապէս, որ նրա տուած կոպէկը կը հասնի մտադրված նպատակին:

Բացի այն, որ հաշուետուութիւնը մի հասարակական պարտականութիւն է, նա կարևոր է և իբրև խթան ապագայ ժողովարարութիւնների համար: Երբ հաշուետուութիւն չը կայ, այն ժամանակ կասկածելի, շինծու լուրերն էլ կարող են աջողութիւն գտնել և իզուր տեղը անուանարկել նոյն իսկ անմեղ մարդկանց:

Այդ է պատճառը, որ իւրաքանչիւր անձին, կամ հասարակական հիմնարկութիւն, որ ժողովել է կամ ստացել է մի որ և է գումար, պարտաւոր է ՀԱՇՎԵ ՏԱԼ ԵՎ ստացածի և ծախսած գումարների մասին:

Մեր պարտքն ենք համարում կրկին անգրական խօսքը, նա չէ կարող առանց զզուանքի ձեռք առնել այդ թերթերը, որոնք առաջին երեսից սկսած մինչև վերջին երեսը լի են՝ կամ ամենաստոր շողոքորթութեամբ, կամ ամենագծուծ հայհոյանքներով, որոնք ամիսներից ի վեր զբաղված են մէկին կամ միւսին շողոքորթելով, մէկին կամ միւսին հայհոյելով:

Տեսէք թէ ինչպէս այն մարդիկ, որոնք դեռ երէկ դարան մտած, որոգայթներ էին լարում այս և այն անձի դէմ, որոնք դեռ երէկ մաղի չափ անգամ արժանաւորութիւն, խելք, շնորք չէին գտնում այս և այն անձի մէջ, այսօր երկիւղ կրելով նրանց ստացած դիրքից, միանգամայն փոխվել են, և մոռանալով իրանց երէկվայ ասածը և արածը, սկսել են ստրկին վայել ստորութեամբ շողոքորթել զօրեղներին, ըսկսել են գովաբանել ոչ թէ միայն այն, ինչ արժանի է գովասանքի՝ այլ և այն, ինչ որ միայն բողոք, յարձակում և դիմադրութիւն պէտք է առաջ բերի:

Այդ բաւական չէ. մինչև պարանոցը շողոքորթութեան մէջ խրված ողորմելի թերթերը, յուսալով՝ որ քծնելով, շողոքորթելով կարող են միանգամայն խելքից հանել ում ուզում են, ոչ թէ միայն նրանց ամենասանելի քայլը, ամեն մի սովորական շարժումը, ամեն մի խօսքը արձանագրում են իբրև պատմական անմահ դէպքեր, այլ և այդ մարդկանց աւելի դուր գալու համար՝ սկսել են անտեղի, անարդար, անհիմն կերպով հայհոյել ամեն մէկին, ով համակարծիք չէ այդ անձանց այս կամ այն արարքին, ով ուզում է քննական աչքով նայել հասարակական գործիչի վրա, ով քաջութիւն ունի հրապարակով ասել, թէ ժողովուրդը սպասում է գործ, հասարակական խնդիրների լուծումն, իր վշտերին դարման...

Եւ ահա հիմնվելով լոկ անձնաւորութիւնների վրա, նպատակ ունենալով անպատճառ, ինչ գնով և ինչ միջոցով էլ լինի՝ հասնել իրանց զազիր նպատակներին, և չը զրկվել զօրեղ հովանաւորներից, հայոց մամուլի ամենալի օրգանները մի քանի ամսից ի վեր այլ և այլ ուրիշ նիւթ, ուրիշ խնդիր, ուրիշ պարապմունք չունեն, բայց եթէ շողոքորթել մէկին և հայհոյել միւսին, խունկ ծխել մէկի առաջ և ամենաստոր դրպարտութիւններ թափել միւսի վրա, գովաբանել մի քանիների դատարկ և անմիտ գործերը, և արշաւանք սկսել միւսների օգտաւէտ, խելացի ձեռնարկութիւնների և մտքերի դէմ:

Այդ է պատճառը, որ հայոց մամուլի այդ ողորմելի օրգանները այժմ բացառապէս զբաղված են մի խումբ անձնաւորութիւններով միայն, լցնելով իրանց էջերը անսահման շողոքորթութեամբ: Եւ դրանով էլ չը բաւականանալով, լրագրական էջերից դուրս էլ դիմում են այնպիսի ստոր, զզուելի, նենգ միջոցների, որ միջնադարեան եզուիտների փեշակն էր կազմում...

Եւ հայոց մամուլը իր անվայել, տպագրական խօսքին անարժան ընթացքի մէջ երբէք այնքան առաջ չէր գնացել, որքան այժմ, երբէք այնքան երես չէր առել, որքան այժմ:

Եւ հասկանալի է, թէ ինչու.—որովհետև շողոքորթութիւնը, հայհոյանքը, եւրոպական պրպտիչները իրանց համար զէնք շինած մարդիկ յոյս ունեն և երազում են, թէ իրանց շողոքորթութիւններով, իրանց կոկորդիլոսեան արտասուքներով կարող են խաբել ում ուզում են, կարող են շոյել սրա կամ նրա ինքնասիրութիւնը, և այդպիսով իրանց ձեռքին զէնք դարձնել...

Թող շարունակեն: Այդ բոլորի դատաստանը կը տեսնի ինքը հասարակաց կարծիքը, որի վրա չէ կարող ազդել ոչ ստրկական շողոքորթութիւնը և ոչ էլ որ և է հայհոյանք:

ՀԱՇՈՒԵՏՒՈՒԹԵԱՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Շատ ծանր տպաւորութիւն է թողնում, երբ լուրեր են հասնում, թէ այս ինչ կամ այն ինչ նպատակով հանգանակված գումարը տեղ չէ հացրած կամ կանոնաւոր չէ ծախսված: Հասարակութիւնը սկսում է կորցնել հաւատը դէպի նուիրաբերութեան գործը, նա այլ և ևս չէ վստահանում նոր նուիրատուութիւններ անել, չը յուսալով հաստատապէս, որ նրա տուած կոպէկը կը հասնի մտադրված նպատակին:

Բացի այն, որ հաշուետուութիւնը մի հասարակական պարտականութիւն է, նա կարևոր է և իբրև խթան ապագայ ժողովարարութիւնների համար: Երբ հաշուետուութիւն չը կայ, այն ժամանակ կասկածելի, շինծու լուրերն էլ կարող են աջողութիւն գտնել և իզուր տեղը անուանարկել նոյն իսկ անմեղ մարդկանց:

Այդ է պատճառը, որ իւրաքանչիւր անձին, կամ հասարակական հիմնարկութիւն, որ ժողովել է կամ ստացել է մի որ և է գումար, պարտաւոր է ՀԱՇՎԵ ՏԱԼ ԵՎ ստացածի և ծախսած գումարների մասին:

Մեր պարտքն ենք համարում կրկին ան-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՔՆՆԱԿԱՆ ՀԱՅԵԱՑՔ

Յօդ. 46. Ի կոչումն հոգաբարձութեան ոչ է մարթ ընտրել զայնոսիկ ծխականսն... որք ունին ի վարձու զկալուածս եկեղեցեաց և ուսումնարանաց, կամ դաշամբք և մուրհակօք կրեն զպարտաւորութիւնս առ այնոսիկ հաստատութիւնս:

Մեր կարծիքով, այդ յօդուածը շատ ընդարձակ ձևով է սահմանափակում ծխականի իրաւունքը. այդ սահմանափակումը մենք իրաւացի ենք համարում միայն այն եկեղեցու և ուսումնարանի վերաբերութեամբ, որոնց հետ ծխականը ունի պարտաւորական յարաբերութիւններ, և ոչ թէ բոլոր եկեղեցիների և ուսումնարանների վերաբերմամբ, ինչպէս տրամադրում է յօդուածը:

Յօդ. 49. Հաստատութիւն հոգաբարձուացն ընտրելոց... լինի կոնդակաւ Վեհափառ Հայրապետի ըստ առաջարկութեան թեմական Առաջնորդի: Արձակումն հոգաբարձուաց լինի նովին կարգաւ:

Այդ յօդուածի վերջին մասը հանդէս է բերում մի նոր գաղափար, իբր թէ ժողովրդական եկեղեցում, ժողովրդական հիմնարկութիւնների մէջ կարելի է արձակել ժողովրդից ընտրված պաշտօնեային ըստ հաճոյից, առանց իրաւասու դատաստանի վճռի: Նախագիծը չէ յիշում այն դէպքերը, որոնց նա օրինաւոր պատճառ է համարում արձակման, սակայն այդ լռութիւնը ինքն ըստ ինքեան խորհրդաւոր է և իրաւունք է տալիս ենթադրել, որ նրա նպատակը եկեղեցու և ժողովրդի շահերը չեն: Իբրև մի միջոց հեռացնելու ժողովրդին եկեղեցական գործերին միջամտելուց, այդ գաղափարը նպատակայարմար է, բայց արդեօք այդ է նախագծի նպատակը: Չենք կարող հաւատալ:

Կան և մի քանի այլ խնդիրներ, որոնք նախատեսված չեն նախագծի մէջ: Ահա նրանք.

ա) Ինչ ձևով պէտք է ընտրվեն հոգաբարձուներ այն ուսումնարանների համար, որոնք գրտնվելով մի եկեղեցու բակում, պահվում են մի այլ եկեղեցու հաշուով:

բ) Ինչ նշանակութիւն ունեն նախագծած կանոնները այն ուսումնարանների վերաբերութեամբ, որոնք առ այժմ կառավարվում են խնամակալ անուանվածների ձեռքով:

գ) Ներսիսեան դպրոցի հոգաբարձուների ընտրութեան եղանակը սահմանված է դպրոցի կանոնադրութեամբ, Յովհաննեան ուսումնարանինը—առանձին կոնդակով, եկեղեցական ծխական ուսումնարաններինը—ընդհանուր կանոնադրութեամբ, որ հաստատված է հանգուցեալ կաթողիկոսից 1889 թ. ուրեմն բնականապէս հարց է առաջ գալիս, թէ կարող են արդեօք գոյութիւն ունենալ զուգընթաց երկու կանոնադրութիւններ մի և նոյն առարկայի մասին—մէկը ընդհանուր, իսկ միւսը թեմական: Մեր կարծիքով, ոչ:

—

Վերև, ասածներից մենք գալիս ենք այն եզրակացութեան, թէ ժողովրդական հաստատութիւնների վերաբերութեամբ, որոնց պատկանում է և հայոց եկեղեցին, ընդհանրապէս, եթէ ոչ վտանգաւոր, խախտել նրանց ինքնուրոյնութեան և ինքնավարութեան հիմքերը: Այդ հիմքերը շինված են ժողովրդի, այս դէպքում ծխականների, իրաւասութեան վրա. ձգտել սահմանափակել նրանց իրաւունքը, կը նշանակէ հարուածել, շարժել նոյն իսկ եկեղեցին. բայց աշխատել կանոնաւորել նրանց գործունէութեան եղանակը ոչ միայն ցանկալի է, այլ և անհրաժեշտ:

Այդ նպատակով կազմելիք կանոնադրութեան հիմքը, մեր կարծիքով, պէտք է լինի այն գաղափարը, թէ՝

ա) Ամեն մի հայ անշուշտ մի որ և է եկեղեցու ծուխ է:

բ) Ամեն մի եկեղեցի պէտք է ունենայ իր բոլոր ծխականների հիմնական ցուցակը, որի թերութիւնների մասին պատասխանատու է ծուխը հովող քահանան:

գ) Ամեն մի ծուխ իրաւունք ունի մասնակցելու եկեղեցական ժողովին մէկ ձայնով իր անդամների մէկի միջոցով:

դ) Ժողովին մասնակցելու իրաւունք ունեցողների ցուցակը կազմվում է հիմնական ցուցակից:

ե) Ժողովին մասնակցելու իրաւունք չունի միայն նա, որ՝ 1) Բանադրված է, կամ պաշտօնապէս ճանաչված է ուրացող: 2) Զրկված է քաղաքացիական իրաւունքից դատաստանական վճռով: 3) Ցայտարարված է մնանկ: 4) Գտնվում է ապաշխարանքի տակ, սահմանած հոգևոր իշխանութեան կողմից, դատաստանական վճռի հիման վրա: 5) Հասակը 25 տարեկանից պակաս է:

զ) Եկեղեցական ժողովին ենթակայ են. 1) ամեն տեսակ ընտրութիւններ, այն է՝ քահանայի, երէցփոխի, հոգաբարձուների, պատգամաւորների և այլ նման ընտրութիւններ: 2) Երէցփոխանի նախահաշուի, հաշուի և գործունէութեան քննութիւնը, և 3) Այն խնդիրների որոշումը, որոնք կենթարկվեն նրա քննութեան երէցփոխանի կամ հոգևոր իշխանութեան կողմից:

է) Ժողովում նախագահում է եկեղեցու աւագ քահանան, կամ բարեկարգիչը:

ը) Երկրորդ ժողովը, որ գումարած է չը կայացած փոխարէն, օրինաւոր է, չը նայելով մասնակցողների թուին:

թ) Ժողովի որոշումները վաւերական են, եթէ 1) Տեղի չեն ունեցել էական նշանակութիւն ունեցող անկանոնութիւններ. և 2) Որոշումները վերաբերում են ժողովին ենթակայ, այսինքն նրա իրաւասութեան պատկանող խնդիրներին:

Անկանոնութեան վերաբերմամբ բողոքը քննելի է, եթէ մատուցված է թեմական առաջնորդին որոշ ժամանակամիջոցում:

—

Անշուշտ դժուար է, մինչև անգամ անհնարին է կազմել կանոններ, որոնք զերծ լինեն թերութիւններից, ուրեմն կազմողի միակ պարտաւորութիւնն է գործ դնել մատչելի միջոցներ, որպէս զի այդ թերութիւնները լինեն ըստ կարելոյն սակաւաթիւ:

Մեր կարծիքով, այն խնդիրը, որ մեր քննութեան առարկայ է, չէ կարող լինել թեմական, այլ նա ընդհանուր է բոլոր թեմերի համար, ուրեմն և կանոնադրութիւնը պէտք է լինի ընդհանուր:

Որովհետև զանազան թեմերում կարող են պատահել մասնաւոր առանձնայատկութիւններ տեղի և հանգամանքների վերաբերութեամբ, ուստի ցանկալի է, որ ամեն մի թեմում կազմվեն առանձին առանձին ընդհանուր կանոնադրութեան նախագծեր, ունենալով ի նկատի թէ ընդհանուր գաղափարը և թէ թեմին յատուկ հանգամանքները: Այդ նախագծերը, որոնք պէտք է նախապէս քննվեն տեղական ժողովներում, ձեռնհաս անձինքների միջոցով, հարկ է ժողովել Էջմիածնում, ուր ուշադրութեան առնելով բոլոր նախագծերի մէջ մտցրած նիւթերը և պահանջները, կազմել մի ընդհանուր կանոնադրութիւն, որ պէտք է և կարող է լինել պարտաւորական բոլոր թեմերի համար: Այս կամ այն թեմի համար պատշաճաւոր բացառութիւնները, որոնց թիւը շատ չեն կարող լինել, կարելի է նշանակել ծանօթութիւնների կամ նոյն իսկ առանձին յօդուածների մէջ:

Կարիք չը կայ կրկնելու, թէ այդ տեսակ կանոնադրութիւնը չէ կարող լինել թեմական, այլ պէտք է լինի ընդհանուր, պարտաւորական բոլոր թեմերի համար, հետևաբար և հաստատված ամենայն հայոց կաթողիկոսից, բազմակողմանի և լուրջ քննութիւնից յետոյ:

Կատարելով մեր պարտաւորութիւնը մեր կարողութեան չափ և թողնելով աւելի ընդարձակ քննադատութիւնը աւելի հմուտներին, յուսանք, որ մօտ ապագայում իրագործվի յօդուածի սկզբում յայտնած մեր ցանկութիւնը՝ առհասարակ եկեղեցական ժողովների կանոնաւորութեան մասին:

Բ. Մելիք-Ղարագեօզեանց

դամ մասնանիշ անել այս բանի վրա այն պատճառով, որ վերջին ժամանակներս ժողովարարութիւններ են եղել շատ տեղ և զանազան հաստատութիւններ գումարներ են ստացել:

„Մշակի" միջոցով ժողովված փողերի մասին մենք անմիջապէս մանրամասն հաշիւ ենք տալիս հասարակութեան: Բարեգործական ընկերութիւնը նոյնպէս հրապարակական հաշիւ է տուել լրագրութեան միջոցով և կը տայ նոյնը իր ընդհանուր ժողովին:

Ցոյս ունենք, որ Էջմիածինը ևս մանրամասն հաշիւ կը տայ ժողովրդին այնտեղ ուղարկած գումարների մասին: Հասարակութեան վրա շատ լաւ տպաւորութիւն թողեց „Արարատի" մէջ տպագրված ցուցակը այն նուիրատուութիւնների, որոնք զրված էին Վեհափառ Կաթողիկոսի տրամադրութեան ներքոյ:

Այժմ երբ բաւական գումարներ ուղարկվեցին Էջմիածին՝ սովեալների համար, յոյս ունենք, որ ստացված և ծախսված գումարների մասին կը տրվի հաշիւ այն մանրամասութիւններով, որին նա պէտք ունի ըստ իր էութեան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ստացանք Կարսի և Երևանի նահանգների սովեալների օգտին.

1) Բագուից, օր. օր. Սաֆարեաններից 10 ռուբլի.

2) Զաքաթալայից, մի քանի աչակերտներից՝ 5 ր. 60 կոպէկ:

3) Բագուից, մի գործակատարից, որ համեստութեամբ իր անունը թագցրել է, 25 ռուբլի:

4) Ղըզլ-Արվադից, Աստուածատուր Գրիգորեանցի և Գրիգոր Ամիրջանեանցի միջոցով, Ղըզլ-Արվադի հայ հասարակութեան մէջ հանգանակված, 120 ռուբլի:

5) Յարսկի-Կօլօղցից, Բաղդասար Ասմանգուլեանցի միջոցով, այնտեղի օտարական հայերից հանգանակած 20 ռուբլի:

6) Բագուից, Աղաբէգ Զուստուղեանի միջոցով, հանգանակված 38 ռուբլի, Էջմիածին, Վեհափառին ուղարկելու համար՝ յօգուտ սովեալների:

7) Եալտայից, Իսահակ Ցակովբեանի միջոցով, հանգանակված 15 ր. 45 կոպէկ:

8) Մեղրիից, տ. Կատարինէ Վաչեանի միջոցով, կանանց շրջանում հանգանակած, 28 ռուբլի:

9) Բագուից, Բուղդան Յով. Սարգսեանից՝ 20 ռուբլի:

10) Մոսկվայից, ուսանողութեան մէջ հանգանակված, 33 ռուբլի:

11) Բալախանից, Վ. Ժամակոչեանի միջոցով, հանգանակված 105 ռուբլի:

12) Կախից, Մովսէս Մովսէսեանի և Կարապետ Մարգարեանի միջոցով, Կախի հայ վաճառականների մէջ հանգանակված 62 ռուբլի, որ պէտք է ուղարկենք Վեհափառին, յօգուտ Թիւրքաց Հայաստանի գաղթականների:

13) Թիֆլիսից, Մնացական Սամարչեանի միջոցով, 24 ր. 50 կոպէկ, որ հանգանակված է Եարալեանի և Ալիխանեանի երկաթաձուլական և մեխանիկական գործարանի հայ և օտարազգի արհեստաւորներից և ծառայողներից:

Ուրեմն նախկին 292 ռուբլի 47 կ. հետ այժմ ունենք 799 ռուբլի 2 կոպէկ:

Այսօր, մայիսի 9-ին, ուղարկեցինք:

1) Կաղզուան, Բարեգործական ընկերութեան ճիւղին 100 ր.:

2) Ալէքսանդրոպոլ, Բարեգործական ընկերութեան ճիւղին 100 ռուբլի:

3) Էջմիածին, Վեհափառին, 200 ռուբլի, յօգուտ սովեալների:

Ուրեմն մեզ մօտ մնաց 399 ռուբլի 2 կոպ.: Ուրեմն մինչև այժմ ստացել ենք 4029 ռուբլի 87 կ.: Ուղարկել ենք 3631 ռուբլի:

ՓԱՍՏԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան Ալէքսանդրոպոլի ճիւղի վարչութիւնը, ստանալով խորհրդից 400 ռուբլի գաւառի կարօտեալներին սերմացու բաժանելու նպատակով՝ կազմեց մի մասնախումբ, գիւղերի վիճակը ուսումնասիրելու և ամենաաղքատ ընտանիքները ցուցակագրելու համար: Մասնախումբը անմիջապէս սկսեց իր գործունէութիւնը և շրջելով մի քանի գիւղեր՝ հաւաքեց կարևոր տեղեկութիւններ: Հասարակութեանը դաղափար տալու համար, թէ ինչ չքաւորութեան մէջ են Շիրակի գիւղերը՝ առաջ ենք բերում այստեղ այդ գիւղերից մէկի՝ Սարիբաշ գիւղի պատկերը, որը կարելի է չքաւորութեան տեսակէտից միջակ համարել:

1) Սարիբաշ գիւղն ունի 41 տուն, ընդամենը 317 հոգի. 2) այդ 41 տունը ունի ընդամենը 50 պուդ ցորեն և 400 պուդ գարի թէ ուտելու և թէ ցանելու համար. 26 տուն սերմացու չունի, 30 տուն չունի բոլորովին ուտելու ցորեն. ցանելու ցորեն ունի 15 ընտանիք (եթէ կարելի է ունենալ համարել, քանի որ ամեն մի նոյն իսկ աղքատ ընտանիք 20—24 պուդ ցանելու ցորեն պէտք է ունենայ). 3) 41 ընտանիքից 17-ը չունի ոչ մի անասուն, ոչ լծկան և ոչ կթան. մնացած 24 ընտանիքը ունեն ընդամենը 56 եզ, երեսուն կով, 7 մատակ, 4 էշ, 3 ձի և չորս մոզի. ամբողջ գիւղը, բացի մի տնից, չունի և ոչ մի հատ ոչխար կամ այծ: 4) Գիւղացիները, իրանց գոյութիւնը պահպանելու համար՝ ստիպված են եղել այս մի ձմեռվայ ընթացքում ծախել իրանց սակաւաթիւ անասուններից 28 կով, 32 եզ, 20 ոչխար, 4 ձի, 3 էշ և 1 մատակ: 5) 41 ընտանիքից միմիայն 6 տունը պարտքից ազատ է. մնացած 35 տունը ունի պարտք մօտ 2584 ռուբլի փողով՝ և 43 սոմար հացահատիկով. կան մինչև 300 ռուբլի պարտք ունեցող ընտանիքներ: Ամբողջ գիւղում մէկ ունևոր ընտանիք կայ, որը ունի 3 սոմար ցորեն, 6 եզ, 7 կով, 3 ձի, 20 ոչխար ու այծ և 2 էշ: 6) Կան ընտանիքներ, որոնք ունենալով 2—3 աշխատանքի ընդունակ անդամներ՝ մնացել են քաղցած. չքաւորութիւնը արդէն ստիպել է ոմանց թողնել գիւղերը և գիմել օտարութեան. վերոյիշեալ գիւղից հեռացել են արդէն 15 երիտասարդ, իսկ մի ուրիշ գիւղից 25 երիտասարդ՝ մեծ մասամբ Բաթում. Շիրակի գիւղերի համար դա անսովոր երևոյթ է:

Աղքատութեան պատճառների մասին շատ է խօսվել մամուլի մէջ, բայց մենք ուզեցինք միայն փաստը նկարագրել: Վերջին 2—3 տարվայ ընթացքում գիւղացիները ծախել են իրանց կենդանիների մեծ մասը, ծախել և գրաւ են դրել տան կահկարասիքը և երկրագործական գործիքները. քիչ տներ գտնվեցին, որոնք դեռ պահպանել են մի քանի փալասներ իբրև անկողին. մեծ մասը դրանից էլ դուրկ են: Վերջացնելով ամեն ինչ, ոմանք ծախել են նոյն իսկ իրանց մարդկերի, գոմերի և տների գերանները, որոնց փլատակները մնում են իբրև վկայ այդ տխուր իրողութեան: Կան ընտանիքներ, որ ուտելու համար ոչինչ չունենալով՝ կերակրվում են բանջարեղէններով:

Պարտքերը, որ սկզբում չնչին են եղել, անտանելի են դարձել գիւղացիներին, շնորհիւ վաշխառուական տոկոսների տարուց տարի աճելուն: Վաշխառուները այս բանում աւելի են առաջ գնացել. նրանք օգտվելով գիւղացու անճարդրութիւնից՝ վերցնում են նրանից արտի երեսը ամենաչնչին գնով կամ մի քանի ռուբլի տոկոսի տեղ. օրինակ, չորս ռուբլի տոկոսի տեղ մի վաշխառու ահա 3—4 տարի է օգտվում է գիւղացու 4 կողանոց կամ $1/2$ դեսեատին արտի երեսից: Եթէ վաշխառուն նոյն իսկ չը ցանէ արտը, տարեկան 3—4 ռուբլի միայն խոտ կարող է քաղել:

Ով որ ծանօթ է գիւղացու տնտեսական պայմաններին, նրա կարիքներին՝ նրան հասկանալի կը լինի, թէ ինչ վիճակի մէջ են գտնվում այդ գիւղերը. կարիքը շատ մեծ է, իսկ բաւականութիւն տալու միջոցները չնչին: Այս դէպքում կարևոր է հասարակութեան աջակցութիւնը, որի չուտափոյթ օգնութեանը սպասում է գիւղացին:

Նախագահ վարչութեան՝ Ա. Կարապետեանց,
Մասնախմբի անդամներ՝ Ա. Մալոյեանց, Թ. Խղմալեանց, Դ. Միքայէլեանց

ԱՍՏՐԱԽԱՆԻ ԵՒ ԲԵՍԱՐԱԲԻԱՅԻ ԹԵՄԵՐԻ ԴՊՐՈՑՆԵՐԸ

Նոր-Նախիջևանի և շրջակայ գիւղերի եկեղեցական-ծխական դպրոցների այժմեան դրութիւնը շատ անհանգստացուցիչ է: Այդ բոլոր դպրոցների մէջ ոչ կարգ կայ, ոչ կանոն. դասընթացը միատեսակ ծրագրով չեն անցնում, դասաւորութեան եղանակները զանազան, դասագրքերը զանազան, մի խօսքով, ամեն ինչ խառնիխուռն, վայր ի վերոյ...

Եւ, ի հարկէ, ինչպէս կարող է այդ ծխական դպրոցներում կարգ, կանոն և միաձևութիւն լինել, երբ մեծ մասամբ ուսուցիչները, հայ և ռուս, թերուս պատանիներ են: Այդ բանին աւելի այժ են տալիս քաղաքացի և գիւղացի հոգաբարձուները, քանի որ այդպիսի հոգաբարձուները աւելի ձեռնտու են համարում այն ուսուցիչներին, որոնք էժան գնով են ծառայում:

Բայց այս բոլոր վնասները, անկասկած, շատ լաւ էր հասկանում հոգևոր կառավարութեան նախկին նախանդամը. ուրեմն էլ ինչու համար հոգատարութիւն չէր անում եկեղեցական ծխական դպրոցների առաջադիմութեան համար, և ծխական դպրոցները լցրել էր թերուս, անփորձ և ուսուցչական իրաւունքներից զուրկ ուսուցիչներով: Չէ՞ որ դրանով անպայման են մնում հնամոտ մանկավարժ ուսուցիչները...

Անդրկովկասում հայոց թեմերը մեծ մասամբ ունեն իրանց թեմական տեսուչները, որոնք ղեկավարում են հանգուցեալ կաթողիկոսի 1889 թուին հրատարակած դպրոցական կանոններով: Իսկ Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմի դպրոցները երբէք իրաւք չեն ունեցել թեմական տեսուչներ, այլ մինչև այժմ կառավարվում են ձևականապէս 1844 և 1886 թուերի առանձին հրահանգների համեմատ՝ այն հիման վրա, թէ Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի թեմերը, իսկապէս Ռուսաստանում գտնվելով՝ պէտք է կառավարվեն 1876, 1884 և 1886 թուերի հրահանգների համաձայն, իսկ կոպարներ և ընդհանուր ուսուցիչների ցանկ, Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի դպրոցների համար, գոյութիւն չունեն:

Ինչպէս յայտնի է, Էջմիածնի ուսումնարանական յանձնաժողովը աչքի առաջ ունի դպրոցական նոր կանոնադրութիւն մշակել, ուստի դիմել է հայ ուսուցիչներին, որ նրանք յայտնեն իրանց կարծիքը ծխական դպրոցների «Կանոնքի» մասին: Ի նկատի ունենալով այս վերջին հանգամանքը, աւելորդ չէ ապագայ կազմվելիք կանոնադրութեան առիթով մի քանի նկատողութիւն անել: Նախ՝ Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի դպրոցներն ևս նոր մշակվող կանոնադրութեամբ պէտք է կառավարվեն, թէ նրանց համար մի ուրիշ նոր կանոնադրութիւն պէտք է մշակվի, և ով պէտք է մշակէ այդ նոր կանոնադրութիւնը: Երկրորդ՝ Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի բոլոր դպրոցները պէտք է կառավարվեն 1876, 1884 և 1886 թուերի առանձին հրահանգների համեմատ, թէ նոյն դպրոցական կանոնադրութեամբ, ինչ կանոնադրութեամբ, որ պէտք է կառավարվեն Կովկասի և Անդրկովկասի բոլոր հայոց ուսումնարանները:

Շատ ցանկալի է տեսնել ապագայ նոր մշակած կանոնադրութեան մէջ պարզ որոշված Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի բոլոր դպրոցական մարմինների իրաւունքները և յարաբերութիւնները, որպէս զի այդ թեմերում դպրոցական գործը կանոնաւոր ընթացքի մէջ մտնի:

Ուս.

ՆԱՄԱԿ ՄՕՍԿՎԱՅԻՑ

Ապրիլի 30-ին

Երեքշաբթի, ապրիլի 26-ին, Որսորդական կլուբի դահլիճում, սիրողները, մասնակցութեամբ դերասան Պետրոսեանի, ներկայացրին Սունդուկեանցի «Պէպո» պիէսան: Ներկայացումը ընդհանրապէս աջող անցաւ: ensemble-ը, որից միշտ զուրկ են սիրողների ներկայացումները, բոլոր գործողութիւններում խստիւ պահպանված էր: Պ. Պետրոսեանին Պէպոյի դերում թիֆլիսցիները արդէն տեսել են: Մեզ համար, որ դերասանին այդ դերում առաջին անգամն էինք տեսնում, խիստ հետաքրքրական էր նրա խաղը: Պետրոսեանը այս անգամ էլ ապացուցեց, որ նա լուրջ, դերը ուսումնասիրող դերասան է. խաղի ժամանակ երևում էր, որ նա ամեն մի խօսքը արտասանում է մտածած, աշխատում է ըմբռնել տիպարը, մի խօսքով իր դերը սովորում է ոչ թէ իբրև մի դաս, այլ այդ նրա համար մի խնդիր է, որը հեղինակը առաջարկում է նրան և որին նա պէտք է պատասխանէ իր խաղով: Այդ ամենակարևորն է դերասանի մէջ և դրանից զուրկ են համարեա մեր բոլոր հայ դերասանները: Իդէպ. դերասանի մէջ պէտք է անպատճառ գոյութիւն ունենայ քննական ոգին, որպէս զի դերասանը կարողանայ պարզել ու ըմբռնել հեղինակի ստեղծած տիպը: Բացի այդ, շատ անգամ հարկաւոր է լինում, հեղինակի գրչով հերոսի բերանը դրած խօսքերում «տողերի մէջ կարդալ», և ահա այդ կարդացողը պէտք է լինի դերակատարը և հեղինակի չասածը՝ իր խաղով նա պէտք է ասէ հանդիսականներին: Իսկ դրա համար հարկաւոր է, որ դերասանը կարդայ, զարգանայ, միշտ սովորի:

Գալով սիրողներին՝ պէտք է մասնանիշ անենք բժ. Մուրադեանին՝ Գիքօյի դերում, որը իր բնական խաղով բաւականին ծիծաղեցրեց հանդիսականներին, պ. Սունդուկեանին՝ Արութինի դժուար դերում և պ. Գէորգեանին՝ Կակուլիի դերում: Կանանց դերակատարներից լաւ էին օր. Ասլանեանը (Շուշան), օր. Պողովեանը (Էփեմիայ), այլ և օր. Խարմաջեանը՝ Կէկէլի փոքրիկ դերում: Հանդիսականները, որոնք բաւականաչափ էին թատրոնում, բուռն ծափահարութիւններով վարձատրեցին խաղացողներին:

Այժմ մի քանի խօսք ներկայացման առիթով: Մեր աղաները չը բարեհաճեցին բախտաւորացնել երեկոյթը իրանց ներկայութեամբ: Դրա պատճառը այն էր, որ ներկայացումը տալիս էին ինտելիգենտ երիտասարդները: Ուսանող երիտասարդ ասելով, մեր տուղերը հասկանում են մի էակ, որը հանգստութիւն չէ տալի աղային, ամեն մի քայլափոխում, ամեն մի յարմար դէպքում քննադատելով նրա տգեղ արարքները, կեանքը, ծաղրելով այն, ինչ որ նրա համար սուրբ է՝ փողը, ինտրիգները և այլն, և այդ էլ՝ ոչ թէ ընտանեկան շրջանում, ծանօթների մէջ, այլ հրապարակապէս, ընդհանուրի առաջ, շատ անգամ և լրագիրներում: Մեր աղաները դեռ էլի մի կերպ համբերում էին, բայց երբ մի քանի շաբաթ առաջ այստեղի երիտասարդութիւնը խմբվեց ու տեղիս եկեղեցական խորհրդից դուրս վռնդեց տարիներով բուն դրած աղաներին, վերջինները տեսան, որ ինտելիգենտ երիտասարդութեան հետ կռուելը հասարակական գործերում անկարելի է. տեսան որ փողով թէև շատ բան կարելի է անել, բայց այդ կռուում փողը իբրև զէնք բանեցնել անկարելի է, ուստի յետ քաշվեցին և այժմ երիտասարդ, ուսանող անունը լսել անգամ չեն կարողանում: Եւ ահա այդ էր պատճառը, որ ներկայացմանը տուղերը փայլում էին իրանց բացակայութեամբ, չը նայած որ ներկայացումը բարեգործական նպատակ ունէր: Այդպէս են վերէժխնդիր լինում մեր աղաները: Sancta simplicitas!.

Ալ. Կաճկաճեան

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

Ապրիլի 29-ին

Անման չը մնաց և Աստրախանը սովեալների օգնութեան գործում: Մեզանում թէև մի քիչ ուշ, բայց եռանդուն մասնակցութիւն են ցոյց տալիս այդ բարոյական պարտականութեան մէջ: Ամենից առաջ պէտք է ասենք՝ որ այստեղ, մի խումբ երիտասարդների ձեռքով, երկու ամիս առաջ, այս նպատակով ժողովվեց մօտ 100 ռուբլի և ուղարկվեց «Մշակի» խմբագրութեան:—Այժմ սկսել են կրկին ժողովել, և մի քանի օրվայ մէջ հաւաքել են 2000 ռուբլուց աւել: Հանգանակութիւնը այժմ էլ շանունակվում է: Անման չը մընացին իրանց եղբայրակիցների օգնութեան գործում և կմնայք: Կանանց ինամատար ընկերութիւնը, ամսիս 27-ին, կլուբում, տուեց մի կօնցերտ, որին մասնակցեցին Թիֆլիսին արդէն յայտնի երգչուհի Խոջայեան և օր. օր. Էլդարեան, Փասոյեան, պ.պ. Սարգսեան և Բոսսի:

Ինչ ասել կուզի, որ համերգը մուտքի կողմից ունեցաւ կատարեալ աջողութիւն. կային այնպիսիները, որոնք իրանց տեղերի համար վճարում էին մինչև 25 ռուբլի: Ներկայ էին և ռուսներ, և ի միջի այլոց նահանգապետի ամուսին տիկին Ցեվեաչովա: Զուտ արդիւնք համերգից մնաց մօտ 700 ռուբլի: Գալով մասնակցողներին, կասենք՝ որ ամենքը ըստ չափու կարողութեան լաւ էին: Առանձին շնորհակալութեան արժանի է օր. Խոջայեան, որ ամենայն ուրախութեամբ չը զլացաւ եղբայրակիցների թշուառութեան գործում օգնութեան գալ: Հանդիսականները բուռն կերպով ծափահարում էին մասնակցողներին, իսկ Խոջայեանին ընծայեցին 3 հատ խաղարկութեան տոմսակ և մի գեղեցիկ ապարանջան:

Յ. Ս.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Նոր-Նախիջևան, մայիսի 3-ին

Երևանի և Կարսի նահանգների ընիկ և գաղթական սովատանջ արիւնակից եղբայրների անողոք կարիքը գոնէ ըստ կարի ամոքելու ցանկութեամբ, բարոյական պարտականութիւն համարեցինք մեր ծանօթների շրջանում մասնաւոր հանգանակութիւն անել և ժողովեցինք 5,055 ր., որից 4,055 ր. ուղարկեցինք Նորին Վեհափառութեան, իսկ 1,000 ր. Կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան Երևանի տեղական ճիւղի վարչութեան:

Այլ և մեր գիտութեամբ, պ.պ. Ց. Զարբխեան և Գ. Ալաճալեան, իրանց յատուկ ձեռներէցութեամբ, Բօստօվի օտարազգի բարեկամներից հաւաքելով 1,080 ռուբլի, նոյն նպատակով ուղարկեցին Վեհափառ Կաթողիկոսին:

Բացի սրանից, նորերս հանգուցեալ Մարգար Պօպովեանի այրին՝ յարգելի տիկին Տիրուհի (Եւդոկիա) Պօպովեան, ի յիշատակ իր հանգուցեալ ամուսնու՝ 2,000 ր. սոյն նպատակով յօժարակամ նուէրը, մեր առաջարկութեամբ, առանձին նամակով նոյնպէս ուղարկեց Վեհափառ Կաթողիկոսին: Ուրեմն ի նպաստ սովեալների մեր գիտութեամբ ուղարկված է ընդամենը 8,135 ր.: Մանրամասն հաշիւը ուղարկված է Նորին Վեհափառութեան:

Նամակիս վերջում քաղցր պարտականութիւն ենք համարում մեր խորին շնորհակալութիւնը հրապարակապէս յայտնել թէ բոլոր նուիրատուներին և թէ մանաւանդ այն յարգելի անձանց, որոնք չը զլացան մեզ իրանց բարեմիտ աջակցութիւնը այս մարդասէր գործում: Այդպիսիներն են.—պ.պ. Մինաս Ե. Պալասանեան—Նոր-Նախիջևանի քաղաքագլուխը, Սերովբէ Անանեան—գործարանատէր Բօստօվ քաղաքում, Ց. Զարբխեան և Գ. Ալաճալեան—վաճառականներ Նոր-Նախիջևանում, քաղաքիս ուսումնարանների վարժուհիներից շատերը, նաև գիւղական քահանաներ, երէցփոխաններ և տանուտէրներ:

Մխիթար վարդապետ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մենք անցեալ անգամ հաղորդեցինք, որ Էջմիածնի հոգևոր իշխանութեան կարգադրութեամբ, ցենդ ձեռք բերել ցանկացող ուսուցիչները ազատ պէտք է լինեն պարապմունքներից մայիսի 20-ից: Այդ լուրի մէջ մի փոքրիկ անճշդութիւն կայ: Մայիսի 20-ից ծխական բոլոր դպրոցներում պէտք է պարապմունքները վերջանան և պէտք է եկող ուսումնական տարին սկսվի սեպտեմբերի 15-ից: Այդպէս անելու նպատակը այն է, որ պատրաստվող ուսուցիչները աւելի ազատ ժամանակ ունենան:

—

Լսում ենք, որ Շվեյցարիայում, գլխաւորապէս Ժընէվում, այժմ հայ ուսանողների և ուսանողուհիների թիւը արագ կերպով աճում է: Դրանց մէջ մեծ թիւ են կազմում մանաւանդ զարարազցիները:

—

Յօգուտ Գրիգոր Արծրունու արձանի և գրուածքների տպագրութեան ստացանք. 1) Էջմիածնի ճեմարանի 30 ուսանողներից 30 ռուբլի. 2) Մօսկվայից, Յովսէփ Թադէոսեանից 1 ռուբլի: Ուրեմն նախկին 3157 ռուբլի 28 կ. հետ այժմ ունենք 3188 ր. 28 կօպէկ:

—

Մեր խմբագրութեան մէջ ստացվեց ժողովրդական մի նոր գրքոյկ «Ցովհաննէս Հուս» վերնագրով, որի մէջ պատմվում է յայտնի վերանորոգչի կեանքը և նրա գործունէութիւնը: Գրքոյկը թարգմանել է ռուսերէնից օրիորդ Ն. Խ.: Թարգմանութեան լեզուն ընդհանրապէս պարզ է, միայն տեղ տեղ փոքրիկ անհարթութիւններ կան. մի տեղ ասված է «նոցա», «նորա», մի այլ տեղ «նրա» «նրանց», մի տեղ «իրան», միւս տեղ «իրեն»: Պատահում են և տառասխալներ: Գրքոյկի բովանդակութիւնը շատ գեղեցիկ է և գնի կողմից էլ (5 կօպէկ) մատչելի ժողովրդին: Հարկաւոր է միթէ աւելացնել, որ մեր օրիորդները՝ եթէ մի փոքր աշխատասէր լինէին, կարող էին ժողովրդական ընթերցանութեան համար այդ տեսակ շատ գրքեր տալ:

—

Մեզ հաղորդում են հետևեալ զարմանալի փաստը.—Թիֆլիսի Նաթլուղի արուարձանի ծխականները միաձայն երէցփոխ են ընտրել պ. Ա. Տէր-Գրիգորեանին: Թիֆլիսի կօնսիստորիան չէ հաստատել այդ միաձայն ընտրութիւնը այն հիման վրա, որ ընտրված երէցփոխը հեռու է ապրում: —Ահա մի նոր, չը լսված պատճառաբանութիւն: Զը հաստատելով ընտրված երէցփոխին, կօնսիստորիան նշանակում է նոր ընտրութիւն: Սակայն ծխականները միաբերան յայտնում են, որ իրանք արդէն ընտրել են, և միանգամայն ցանկութիւն չունեն նոր ընտրութիւն անելու:

—

Թիֆլիսի «Ձիերի տօնավաճառը» սկսել է գրաւել ձի վաճառողների և ձի գնողների ուշադրութիւնը: Ճիշդ է, տօնավաճառի միջոցով ծախված ձիերի թիւը դեռ շատ փոքր է, օրական մի քանի հատ, բայց ձիավաճառները և ձի գնողները սովորում են յաճախել տօնավաճառը: Սպասում են մի երկու օրից յետոյ ձիերի մեծ քանակութեան Հիւսիսային Կովկասից: Քաղաքային վարչութեան կողմից նշանակված անձինք վերցնում են իւրաքանչիւր ծախած ձիու համար նրա գնի 1%: Մենք կարծում ենք, որ առաջին երկու տարին պէտք էր խրախուսել տօնավաճառը ձի բերողներին և նրանցից ոչ մի տուրք չը վերցնել:

—

Մայիսի 8-ին, իշխանուհի օր. Ս. Արղութեան, որը ունի Թիֆլիսում մանկական պարտէզ և պանսիոն, կազմակերպել էր իր դպրոցում մանկական տօն, որին հրաւիրված էին երեխաներ իրանց ծնողներով: Մանկական հանդէսը կազմակերպված էր մեծ հմտութեամբ. մի կողմից երաժշտութիւն, միւս կողմից խմբական երգեր և պար, երրորդ կողմից հրաւառութիւն.—այս բոլորը մեծ զուարճութիւն պատճառեցին վոքրահասակ հասարակութեան: Ցանկալի է, որ այդ տեսակ մանկական տօները, որքան կարելի է, յաճախ կրկնվեն մեր դպրոցներում:

—

ԷՋՄԻԱԾՆԻՑ մեզ գրում են. «Ճեմարանի Ա. լսարանում այժմ մնացել են 2 ուսանող, իսկ Բ. լսարանում 4 ուսանող: Առհասարակ մտադրութիւն կայ քչացնել ճեմարանի աշակերտների թիւը, և հասցնել, եթէ կարելի է, մինչև 100-ի:»

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Թեմական դպրոցի հոգաբարձական ընտրութիւնը արդէն հաստատված է Վեհափառ Կաթողիկոսից և հաստատութեան կօնդակը տեղիս փոխանորդի մօտ է: Սպասում ենք նոր հոգաբարձուների պաշտօնի հրաւիրելուն: Թեմական դպրոցի քննութիւնները, որ մինչև այժմ եղել են հրապարակօրէն, ահա երկու տարի է, ինչ հետզհետէ այլ ձև են ստանում: Այս տարի միմիայն վեցերորդ դասարանի քննութիւններն են հրապարակօրէն և այն էլ նշանակված են այնպիսի ժամանակ, երեկոները, երբ դժուար թէ հասարակութիւն յաճախի»:

—

ՄՕԶԴՕԿԻՑ մեզ գրում են. «Դերասան Աբէլեան իր խմբով այստեղ առաջին անգամ ներկայացրեց «Հրէուհի» ողբերգութիւնը, իսկ յետոյ, հասարակութեան խնդիրքով՝ «Մեծապատիւ Մուրացկաններ», որ շատ աջող և կենդանի անցաւ: Պ. Աբէլեանի կազմած խմբի մէջ մենք տեսանք պօլսեցի դերասանուհի օր. Վարդիթերին. վերջինս, պէտք է անկեղծ խոստովանած, լաւ բեմական ոյժ է և հաստատ համոզմունքով կասենք, որ Թիֆլիսի թատրօնական կոմիտէը չի սխալվի, եթէ առաջիկայ թատրօնական սեզօնի համար պայմանաւորվի օր. Վարդիթերի հետ: Թէ օրիորդը և թէ պ. Աբէլեան իրանց մտածած ու աջող խաղով՝ մեծ զուարճութիւն պատճառեցին մեր հասարակութեան»:

—

ԲԷԼԻ-ԿԼԻԻՋԻՑ մեզ գրում են. «Մայիսի 2-ին Շամշուդէ հայաբնակ գիւղում մի 15 տարեկան աղջիկ ինքնասպանութիւն գործեց, և ինչպէս լսում ենք, այն պատճառով՝ որ օրիորդի ծնողները չեն կամեցել իր հաւանածի հետ ամուսնացնել: Այդ օրը նա ուրախ՝ իր ընկերուհիների հետ զբոսնում է ման գալու դաշտը. տուն վերադառնալիս խորհրդաւոր «մնաս բարով» է ասում նրանց: Տանը առանձնանում է մի սենեակում, վերցնում է հրացանը, լցնում, ապա սեղանին մի դանակ ցցելով, հրացանի ոռը դանակի դէմ տալով և հրացանի բերանը կրծքին բռնելով՝ քաշում է իր կողմը: Գնդակը կրծքից անցնելով՝ դուրս է գալիս մէջքից: Սա միակ դէպքը չէ, որ ծնողների ագիտութիւնը պատճառ է դառնում այս տեսակ զոհերի:

—

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են. «Մայիսի 1-ին մի ցաւալի ինքնասպանութիւն տեղի ունեցաւ: Իր բնակարանում կախվել է մի գերմանացի օրիորդ: Թէև նա ոչ մի գրութիւն չէ թողել, թէ ինչ պատճառից դրդված ինքնասպանութիւն է գործել, բայց և այնպէս առայժմ նրա մասին պատող լուրերից երևում է, որ պատճառը «պատուի» խնդիր է.—նրան մէկը խաբել է... Այսօր առաւօտեան, երբ հարևան կենդանները տեսնում են, որ նա իր սովորական ժամանակին չէ զարթնում, մօտենում են դրանը, բաղխում ու բաց անելով՝ նրանց առաջ պատկերանում է մի այսպիսի տեսարան. թիկունքը երկաթէ մահճակալին դէմ տուած՝ փռված է խեղճը յատակի վրա, իսկ մետաքսեայ գործուածքի մի ծայրը կապված է մահճակալի վերի երկաթներից, միւս ծայրը նրա պարանոցից: Ինչպէս երևում է, նա պարանոցը կապել է մահճակալի վերի երկաթներից և յետոյ կախ ընկել նրանից՝ մէջքով հրելով նրան, որից և առաջ է եկել մահ:»

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ մեզ գրում են. «Բարեգործական ընկերութեան այստեղի ճիւղի վարչութիւնը, խրախուսված այն հանգամանքից, որ ամեն օր զանազան տեղերից օժանդակութիւն է ստանում՝ Նոր-Բայազէտի գաւառի կարօտեալներին նպաստամատոյց լինելու համար, եռանդոտ կերպով գործում է: Անդադար շրջելով աղքատ գիւղերը, վարչութիւնը անձամբ տեղեկութիւն է ունենում չքաւորների մասին և անմիջական օգնութիւն հասցնում՝ հաց բաժանելով նրանց: Այդ եռանդի հետ միասին, նկատվում է և ընդհանուր ողորմութիւն: Ամեն կողմից շատ ու քիչ օգնութիւն են հասցնում աղքատ աղքաբնակութեան կարիքներին: Քաղաքում որ կողմ նայում էք՝ էժան գներով ալիւր են ծախում՝ Ռուսաստանից բերած: Եթէ հացի այդ ներմուծումը չը լինէր՝ տեղականը 100—120 ռուբլիով կը ծախվեր խալվարը (30 պուդ): Այժմ տեղական հացը՝ իբրև հազագիւտ հացահատիկ՝ գործադրվում է յատկապէս ցանելու համար իբրև սերմացու և խալվարը ծախվում է՝ ապառիկ 55 ր. իսկ կանխիկ՝ 45 ռուբլի»:

—

ԶԱՔԱԹԱԼԻՑ, տեղական հոգաբարձութեան նախագահ Թ. Ք. Ատովմեան ուղարկել է մեզ տպագրելու հետևեալը. «Թոյլ տուէք ձեր լրագրի միջոցով, Զաքաթալի հայոց ուսումնարանի հոգաբարձութեան կողմից, շնորհակալութիւն յայտնել պ. Գ. Հայրապետեանցին, որն իր հանգուցեալ որդու յիշատակի համար նուիրեց տղայոց ուսումնարանին 50 ռուբլի, և պ. Ա. Զօրեանցին, որն իր հանգուցեալ կնոջ յիշատակի համար նուիրեց 50 ր. նոյն ուսումնարանին և 100 ռուբլի բացվելիք օրիորդաց ուսումնարանին:»

—

ՂԱՐԱՍՈՒ-ԲԱՁԱՐԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 24-ին, կիրակի երեկոյեան, քաղաքային կլուբի դահլիճում տեղի ունեցան պարահանդէս և վիճակախաղ՝ յօգուտ տեղիս նորակազմ կարմ. ձևի դպրոցի: Վիճակախաղի ենթարկվեցին դպրոցի սանուհիների բազմաթիւ ձեռագործները և քաղաքիս հասարակութեան նուիրած իրերը: Ներկայ էր խուռն բազմութիւն հայ և օտար հասարակութեան: Վիճակախաղը շատ աջող անցաւ: Զուտ արդիւնք մնաց 500 ռուբլի: Խորին շնորհակալութեան արժանի են պ. Ց. և տիկին Սիլինեանները, որոնց նախաձեռնութեամբ և աշխատութեամբ կայացաւ վիճակախաղը»:

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են. «Այստեղ է այժմ և ներկայացումներ է տալիս ռուսաց թատրօնական խումբը: Պէտք է խոստովանել, որ խումբը շատ լաւ կազմակերպված է և բաղկացած ընտիր ոյժերից: Աչքի են ընկնում տ. Կօլցովա և պ. Սիվերսկի, որոնք դրամատիկական դերերում հիանալի են»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԵՐԼԻՆԻ ԼՐԱԳԻՐՆԵՐԻ ԽՄԲԱԳԻՐՆԵՐԻ ԴԱՏԸ

—

Այս օրերս Բերլինում աւարտվեց Բերլինի լրագիրների ինն խմբագիրների դատի քննութիւնը: Այդ խմբագիրները մեղադրվում էին նրա համար, որ նրանք, տպագրելով յօդուածներ անգործ բանւորների ժողովների և ցոյցերի մասին, որ տեղի ունեցան յունվարին Գերմանիայի մայրաքաղաքում, մեղադրում էին Բերլինի պօլիցիան: Այն ժամանակ գերմանական բոլոր լրագիրները միաձայն պախարակում էին պօլիցիայի գործողութիւնները, սակայն գերմանական արդարադատութիւնը շատ տարօրինակ վերաբերվեց այդ երևոյթին. նա դատի կանչեց միայն արմատական և սոցեալ դէմոկրատական մամուլը: Այն ինչ վկաներն ևս, որոնց թւում կային և պահպանողական լրագիրների թղթակիցներից շատերը, որոնք, որպէս յայտնի է, համակրութեամբ են վերաբերվում պօլիցիային, բոլորը միաձայն պնդում էին, որ պօլիցիայի բռնի գործողութիւնները ամբոխի վերաբերմամբ բոլորովին աւելորդ էին և միակ պատճառ եղի ունեցած անկարգութիւնների: Զը նայելով դրան, մեղադրված բոլոր խմբագիրները բանտարկութեան դատապարտվեցին զանազան ժամանակամիջոցով, իսկ երկուսը մինչև անգամ մի քանի հարիւր մարկ տուգանքի:

«Այդ դատի վախճանը առաջուց կարելի էր նախատեսել, ասում է «Daily News» լրագրի բերլինի թղթակիցը: Առհասարակ ամբողջ դատավարութիւնը այնպէս էր կատարվում, որ ակամայ կասկած էր ընկնում դատարանի անկողմնապահութեան վրա: Նախ՝ ինքն դատարանի նախագահը դժգոհութիւն էր յարուցանում իր վարմունքով: Երբ պաշտպաններից մէկը յիշեց հասարակական կարծիքի մասին, նախագահը ընդհատեց նրան և կոպիտ կերպով ասեց. «Այստեղ ոչինչ հասարակական կարծիք չը կայ»: Առհասարակ նա ակնյայտնի ցոյց էր տալիս իր ատելութիւնը դէպի մամուլը և այնպիսի համոզմունք կարելի էր կազմել, որ Գերմանիայում աւելի հեշտ է կանցնէր կապրիվիին վիրաւորել, քան մի հասարակ պօլիցիականի: Նոյնպէս պօլիցիականի երդումը աւելի մեծ գին ունի դատարանի աչքում, քան թէ որ և է ազնիւ քաղաքացու երդումը: Այդպիսի պայմաններում դատապարտվածների վիճակը նախապէս որոշված էր:»

Ազատամիտ մամուլը սաստիկ բողոքում է նախագահի այդպիսի վարմունքի դէմ և մինչև անգամ չափաւոր ազատամիտ լրագիրները այն կարծիքն են յայտնում, որ մի այդպիսի վարմունք չէ կարող բարձր դիրքի վրա պահել դատարանի հեղինակութիւնը:

ՄԱՀՎԱՆ ՊԱՏԺԻ ՀԱՐՑԸ

—

Ներկայումս ֆրանսիական պատգամաւորների ժողովում քննվում է հրապարակական մահվան պատիժը վերացնելու խնդիրը: Հակառակ ֆրանսիական կառավարութեան սպասելիքների, այդ նոր օրէնքի դէմ են պատգամաւորներից շատերը: Մի կողմից այդ նոր օրէնքի դէմ են այն բոլոր պատգամաւորները, որոնք մահվան պատիժը, այն էլ հրապարական, վախեցնող մի միջոց են համարում: Միւս կողմից պատգամաւորներից շատերը, հակառակ լինելով մահվան պատժին, աշխատում են մի նոր նախագիծ առաջարկել, որով ձգտում են չնջել մահվան պատիժը ֆրանսիական օրէնսդրութիւնից: «Temps» լրագիրը բերում է Բօվիէ-Լապէրի խօսքերը, որը ասում է թէ՝ «Մահվան պատժի նշանակութիւնը թուլացնելու և նրա վերացնելուն նպաստելու ամենալաւ և ամենահեշտ միջոցը այն է, երբ հրապարակներում է կատարվում այդ պատիժը: Մենք արդէն սկսում ենք զգալ, աւելացնում Բօվիէ-Լապէր, այդ գործողութեան ամօթալի նշանակութիւնը և երևի երկար չենք կարող տանել այդ դրութիւնը»:

Հիւսիսային գործակալութեան հեռագիրը արդէն հաղորդում է, որ պատգամաւորների ժողովը մերժեց հրապարական մահվան պատժի վերացումը և նրա ջնջումը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Բուդա-Պէշտից հեռագրում են «Berl. Tag.» լրագրին, որ ս. Երրորդութեան տօնին Ունգարիայի մայրաքաղաքում և զանազան ուրիշ ժողովներում կազմակերպվում են մեծ ցոյցեր յօգուտ եկեղեցական-քաղաքական ըէֆորմների և մագնատների ժողովի դէմ: Բոլոր նահանգներում մեծ յուզմունք է տիրում:

—Վիէննայից հեռագրում են, որ Պրագայում այս օրերս կալանաւորվեցին եօթ անչափահաս երիտասարդներ, որոնք գաղտնի ընկերութիւն էին

կազմել։ Նրանք մեղադրվում են պետական դաւաճանութեան համար։

—Բ. Դրան հրամանը՝ բոլգարական նոր թեմեր հաստատելու մասին Մակեդոնիայում, զայրոյթ յարուցեց ոչ միայն յոյների, այլ և ռումինացիների մէջ։ Ռումինական եկեղեցական իշխանութեան բողոքին՝ Թիւրքաց արդարադատութեան մինիստրը պատասխանեց, որ Բ. Դուռը այլ ևս ոչինչ չէ կարող անել։

—«Ind. Belge» լրագիրը հաղորդում է, որ նորերս իտալական ներքին գործերի մինիստրը ստատիստիական տեղեկութիւններ հաւաքեց օրէնքով չը հաստատված քաղաքական ընկերութիւնների մասին Իտալիայում։ Ցայտնվեց, որ անցեալ տարուց այդպիսի ընկերութիւններ հիմնված են թւով 360։ Այդ թւում չեն մտնում ոչ քանւորների բազմաթիւ լիգաները, որոնք նորերս փակվեցին, ոչ էլ այն գաղտնի ընկերութիւնները, որոնք բազմաթիւ են Իտալիայում։

„ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ԲԵՐԼԻՆ, 6 մայիսի։ Մայնցից հաղորդում են «Vossische Zeitung» լրագրին, որ այնտեղ կալանաւորվեցին երկու ֆրանսիացիներ, որոնք արտանկարում էին ամրութիւնները. կալանաւորվածները հրաժարվեցին տեղեկութիւններ տալ իրանց ազգութեան մասին։—Հանքերի մէջ աշխատող բանւորների համագումար ժողովը 76 ձայների մեծամասնութեամբ 10-ի դէմ այսօր վճիռ կայացրեց, որով բանւորական օրը 8 ժամ պէտք է համարվի։ Վճռին ձայն տուին 39 գերմանացի, 30 անգլիացի, 4 ֆրանսիացի և 3 բելգիացի։ 10 անգլիացիներ ձայն տուին վճռի դէմ։

ԼՕՆԴՕՆ, 6 մայիսի։ Անգլիական եկեղեցու արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների մանիֆէստը բողոքում է եկեղեցին պետութիւնից բաժանելու վերաբերեալ օրինագծի դէմ վալիսում։

ԲԵԼԳՐԱԴ, 6 մայիսի։ Վճռաբեկ դատարանը դադարեցրեց Միլանին վիրաւորելու համար սկսված դատը մամուլի դէմ, հակասահմանադրական համարելով թագաւորի հրամանը՝ Միլանին իրաւունքներ վերադարձնելու մասին։ Արմատականներից շատերի մօտ խուզարկութիւններ են կատարվում։

ՎԻԵՆՆԱ, 6 մայիսի։ Այսօր պատգամաւոր Պէռնէրստորֆէր մի առաջարկութիւն ներկայացրեց լեհյատադին՝ ածխահանքերում օրական 8 ժամվայ աշխատանք մտցնելու վերաբերմամբ։

ՄԱԴՐԻԴ, 7 մայիսի։ Բարձրագոյն զինուորական խորհուրդը հաստատեց բարցելոնեան անարխիստների վերաբերմամբ կայացրած վճիռը։ Վեց հոգի մահվան պատժի են դատապարտված, իսկ չորսը ցմահ տաժանակիր աշխատանքների։

ՊԱՐԻԶ, 7 մայիսի։ Պատգամաւորների ժողովը մերժեց հրապարակապէս մահվան պատժի վերացումը և նրա ոչնչացնելու նախագիծը։

ԲԵՐԼԻՆ, 8 մայիսի։ Անգլիական դէլէգատները գնացին հանքագործարանական կոնգրէսից։ Կոնգրէսը փակվեց, վճռելով ապագայ կոնգրէսը Պարիզում կայացնել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 մայիսի։ Բարձրագոյն բարեհաճութեամբ, կայսրութեան բոլոր տեղերում ստորագրութիւն է բացված՝ ի Նպաստ երկրաշարժից վնասվածների ցունամանում։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ Մ. ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ սոյն մայիս ամսի 18-ին, երեկոյեան 8 մամին, կը լինի առուրդ՝ կապալով տալու երեք կրպակներ, հանդերձ նկուղներով (անասնանոցի), որոնք գտնվում են քաղաքիս 3-րդ մասում, Կուզնեցկի փողոցում։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձական գրասենեակը ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10—12 ժամը։ 1—1

ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ
Հետևեալ մեծաղիր պատկերները

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ	50 կ.,
ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ (սակաւ.)	1 ր.,
ՐԱՖԱԻԻ	40 կ.,
ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՑԻ	40 կ.,
ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆԻ (սակաւ.)	1 ր.,

Գումարով զիջումն կը լինի։ Վերադիր վճարով կարելի է ստանալ։ Դիմել՝ Тифлисъ, Саркису Согомонянцъ. (№ 51) 2—4

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից։

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հիւանդութիւնների։

Կ. Գ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեարդային հ.

Դ. Դ. ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխաների և կանանց հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—11½—12½ ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—12½—1 ժ. կանանց հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—6—7 ժ. Սիֆիլիսի և մէզի ու սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7½ ականջի, կոկորդի և քթի ու նեարդային հ. երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ։

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ քիմիական և խաշորացուցական հետազօտութիւններ է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ.։ Համախորհրդի (կոնսիլիումի) ղ օպերացիայի համար առանձին։ Հիւանդանոցումը ընդունվում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴԻՆԵՐ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
բժշկապետ ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ։ (№ 72)

Վաճառվում է, քանդակագործ Յէյտլինի պատրաստած,

ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԿԻՍԱՐՁԱՆԸ

Ծախվում է Թիֆլիսում, Եփրեմ Ծատուրեանի խանութում։ Գինն է 10 ր. օտար քաղաքացիք ճանապարհածախսի համար պէտք է վճարեն 2 ռուբլի։
(№ 52) 1—5

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ (28×18 սանտ.) պատկերը ՃԵՆԱՊԱԿՈՒ (ֆարֆորի) վրա տպագրված և պատրաստված Լօնդոնում, Տ. ՆԱԶԱՐԵԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ, սաացվել է արդէն Թիֆլիսում։

Այս պատկերը, որ մեր երկրի համար չէը տեսնված նորութիւն է, անշուշտ կը գրաւի ամենանուրբ ճաշակ ունեցող գեղարուեստագէտի ուշադրութիւնն ու հրապոյրը։ Այս պատկերը պատրաստված է այնպէս, որ պէտք չունի ոչ առանձին շրջանակի և ոչ էլ յենարանի։ Անհրաժեշտ զարդ է ուսումնարանների, կոնսիստորիաների և ամեն մի գրագէտի սեղանի։ Իւրաքանչիւր պատկերը ունի իր առանձին արկղը։ Գինը Թիֆլիսում 3 ր. է, իսկ ճանապարհածախսով 4 ռուբլի։

Դիմել՝ Թիֆլիս „Աղբիւր“ - „Տարազի“ խմբագրութիւն։ (Тифлисъ, ред. журнала „Агбюръ-Таразъ“).
(№ 52) 1—4

Շուտով լոյս կը տեսնի
Պ. ՄԱՆՏԵՂԱՅՅԻ
„ՀԻՒԱՆԴ ՍԷՐ“
առողջապահական վէպը

Դիմել՝ Александрополь учит. Ерванду Налбандянъ (ե. շ.) (№ 39) 4—4

!Զգուշացէք կեղծումներից!
Հիգիէնական
ԲՕՐՆՕ-ՏԻՄՕԼԵԱՆ ՍԱՊՕՆ
Գ. Ֆ. ԻԻՐԳԷՆՍ
պրոֆիլորի։

Ոչնչացնում է երեսի դեղին բծեր, մաքրում է արեից այրվածը, ոչնչացնում է պզուկներ և քրտինքը։ Առաջարկվում է որպէս տուալէտի անուշահոտ սապօն բարձր տեսակի։ Ոսկի մեդալ՝ 1893 թ.

Գինը կտորի համար 50 կոպ., ½ կտոր՝ 30 կ.։ Ծախվում է բոլոր դեղագործական մագազիններում և դեղատներում։

Գլխաւոր պահեստ ամբողջ Ռուսաստանի համար։ Գ. Փ. Իւրգէնսի մօտ ՄՕՍԿՎԱՅՈՒՄ։ Դէպօ Թիֆլիսում. Դեղագործ. ապր. Կովկ. Ընկ. պահեստում, Ծուրինովի, Պոպովի և Աղմուրովի դեղատներում և Արիստակովի մօտ։ (ե.) (№ 126) 5—12

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՕՆ
ՏԷՐ—ՅԱԿՈՎԲԵԱՆԻ

Ընդունում է երթևեկ, կիսաթոշակաւոր և թոշակաւոր աշակերտներ։ Պատրաստում է կլասիքական գիմնազիայի, ռէալական ուսումնարանի, կադէտների կորպուսի և այլ միջնակարգ ուսումնարանների համար։

Թիֆլիս, Գանօվսկայա փողոց, № 11, սեփական տուն։
(№ 35) (եր. և շ.) 13—25

ԴԵՂԱԳՈՐԾ Ա. Ս. ԱՐԻՍՏԱԿԵԱՆԻ ՊԱՀԵՍՏ ԵՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

գեղերի, մարթին գեղեցկացնող և հոտաւէտ, նոյնպէս և առողջապահական նիւթերի և տնտեսական գործիքների, բացված է Կուկիայում, Վօրոնցովի արձանի հանդէպ, բժշկապետ Նաւասարդեանի առաջին մասն. Հիւանդանոցի տակ։
(№ 67) 71—100 (ե. շ.)

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՐՕՍԻԱ“

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ 1881 Թ.

Ս. Պետերբուրգում, Большая Морская, № 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ 20,500,000 ՐՈՒԲԼԻ

Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետական բանկում։

Ընկերութիւնը ընդունում է՝

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

այսինքն դրամագլուխների և եկամուտների, ապահովելու ընտանիքը կամ սեփական ծերութիւնը, բաժինքը աղջիկների համար, թոշակները տղաների համար և այլն, առանձին շահաւէտ պայմաններով և ապահովագրողների մասնակցութեամբ Ընկերութեան օգուտներին։

1894 թվի յունվարի 1-ին «Ռոսսիա» ընկերութեան մէջ ապահովագրված էին 28,246 անձինք 75,621,010 ռուբլի դրամագլխով։

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԺԲԱՂԴ ԴԷՊՔԵՐԻՑ

թէ առանձին անձինքների, նոյնպէս և համագումար ապահովագրութիւններ գործարաններում ծառայողների և բանւորների,—պակասեցնելով ապահովագրական վճարները՝ դիվիդէնդի փոխարէն։

ՀՐԴԵՀԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ շարժական և անշարժ կալուածքների (շինութիւնների, մեքենաների, ապրանքների, կահկարասիքի և այլն)։

ՏՐԱՆՍՊՕՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

գետային, ցամաքային և ծովային. ապահովագրութիւն նաւերի։

Ապահովագրութեան մասին յայտարարութիւնները ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ հաղորդվում են Վարչութեանը Ս. Պետերբուրգում (Большая Морская, սեփական տուն, № 37), Կովկասեան շրջանի համար ընկերութեան վարչութեան մէջ՝

ԹԻՖԼԻՍՈՒՄ, Սերգիևսկայա փ. տ. № 6. և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում։

Ապահովագրական տոմսակներ՝ ճանապարհորդներին ապահովագրելու համար դժբաղդ դէպքերից՝ երկաթուղիներով և շոգենաւերով ճանապարհորդութեան ժամանակ տրվում են նոյնպէս երկաթուղիների կայարաններում և շոգենաւային նաւահանգիստներում։ (№ 42) 6—15

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Հ. Յ. ՕՐԲԷԼԻ

Սօլօլակսկայա փողոց, սեփական տանը №№ 15—16

ԸՆԴՈՒՆՈՒՄ Է ՀԻՒԱՆԴՆԵՐԻՆ

Առաւօտեան 8 ժամից մինչև 12 ժ. և երեկոյեան 4 ժամից մինչև 6 ժ.
Կիրակի և տօն օրերին առաւօտեան 8 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ։
(№ 145) 145—150

„ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ“

Աշխատութիւն ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՍԵՂՐԱԿԵԱՆԻ։

Գինն է 1 ռուբլի։ Ծախվում է Թիֆլիսում կենտրօնական գրավաճառանոցում, և Յովհաննէս Տէր-Սարգսեանցի մագազինում. Դվորցովայա փողոցի վրա, Բագու „Արօր“ տպարանում։ (№ 6) 9—10

НѢМЕЦКАЯ ГОСТИННИЦА

HOTEL NIEMIECKI, „ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ“ գտնվում է ՎԱՐՇԱՎԱ-ՅՈՒՄ, քաղաքի կենտրօնում, նորից վերաշինված, ունի 90 կահաւորված նոմէրներ որոնց սարք ու կարգը ամենալաւ արտասահմանեան հիւրանոցների սենեակներին է նման։ Նոմէրների գինը 50 կոպէկից մինչև 3 ռուբլի օրական, անկողնով և ծառայով։ Հիւրանոցում կայ ընթերցարան-գրադարան, որտեղ ստացվում են հայերէն „Մշակ“ և „Նոր-Դար“ լրագիրները, հիւրերի համար անվարձ։ Կայ բէստօրան, տելեֆոն, քաղցրեղէնների խանութ, բաղնիքներ։

Հիւրանոցի կառքերը գտնվում են բոլոր երկաթուղային կայարաններում։
(№ 21) 80—130 (շ.)

Дозволено цензурою, Тифлисъ, 9 Мая 1894 г. Типографія Канцел. Главнонач. Гражданск. частью на Кавказѣ, Лорисъ-Меликовская ул., д. каз.